

**«ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՍՏԱՏԵՑ**

**«Դուք էք հպարտութիւն ու վստահութիւն ներշնչող այն
պատասխանը, որ երիտասարդ սերունդը տէրն է իր
ազգային գիտակցութեան և յատկապէս արեւմտահայերէնի
պաշտպանութեան գոյապայքարին»**

Իրերայաջորդ հինգ շաբաթներու վրայ երկարած սուր մրցակցութենէ ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հայրական քաջալերանքով եւ օրհնութեամբ չորս տարի առաջ սկսած «Խաչիկ Պապիկեան» Հիմնադրամի աշակերտական ամենամեայ մրցումներուն չորրորդ հանգրուանը վերջ գտաւ եզրափակիչ հանդիսութեամբ, Կիրակի, 16 Յունիս 2013-ի կէսօրին, Կաթողիկոսարանի Վեհարանին մէջ: Յաւարտ Ս. Պատարագի, Վեհարանը ամբողջութեամբ գրաւուած էր բախտաւոր աշակերտ-աշակերտուհիներու, ուսուցիչ-ուսուցչուհիներու, տնօրէններու, ծնողներու եւ ազգայիններու կողմէ, որոնք եկած էին ներկայ գտնուելու մրցանակաբաշխութեան հանդիսութեան եւ աջահամբոյրով շնորհաւորելու Արամ Ա. Կաթողիկոսը՝ իր գահակալութեան 18-ամեակին առիթով:

Հանդիսութեան բացումը կատարելով՝ կազմակերպիչ մարմինի անունով Կաթողիկոսարանի Կրթական եւ Հայագիտական հարցերու գրասենեակի վարիչ Սարգիս Կիրակոսեան ուրախութեամբ անդրադարձաւ, որ ինչպէս նախորդ երեք տարիներուն՝ այս տարի ալ լիբանանահայ միջնակարգ եւ երկրորդական գրեթէ բոլոր վարժարանները բերին իրենց ամբողջական մասնակցութիւնը: 2012-2013 կրթական տարեշրջանի Հայ լեզուի եւ գրականութեան, Հայոց պատմութեան, հայ մշակոյթի եւ կրօնագիտական նիւթերու եւ Ասմունքի երեք մրցումներուն այս

տարի մասնակցեցան 4 միջնակարգ եւ 12 միջնակարգ ու երկրորդական բաժիններ ունեցող դպրոցներ՝ 115 աշակերտ-աշակերտուհիներով:

«Մրցակցութիւնը եղաւ սուր: Ընդհանուր միջինները՝ շատ մօտ իրարու, իսկ մրցակցութիւնը՝ աւելի քան գոհացուցիչ: Փաստօրէն, տասնվեց մասնակից դպրոցներէն այս տարի տասը դպրոց մրցանակներու տիրացաւ», յայտարարելէ ետք, Սարգիս Կիրակոսեան ուրախութեամբ նշեց, թէ այս իրողութիւնը պերճախօս ապացոյցն է մրցումին անփոխարինելի պահանջին, անոր յառաջացուցած համընդհանուր խանդավառութեան եւ Կաթողիկոսարանի վարկին ու հեղինակութեան, ինչպէս նաեւ՝ մրցանքին բծախնդիր պատրաստութեան եւ դատակազմերուն որդեգրած անաչառ արժեւորումին:

«Ահա թէ ինչու յաղթեցին բոլորը: Յաղթեց լիբանանահայ վարժարանը, յաղթեց ողջ լիբանանահայութիւնը եւ, առաջին հերթին՝ իր զաւակը հայ ոգիի եւ մտքի Մեսրոպաշունչ դարբնոցին վստահած հայ գիտակից ծնողքը» շեշտելէ ետք, Ս. Կիրակոսեան եզրափակեց, որ մրցանակակիր 18 աշակերտները կը կազմեն Արամ Ա. Վեհափառի ընտրութեան եւ օժման 18-րդ տարեդարձը շնորհաւորող գեղեցիկ ծաղկեփունջ մը՝ «բոլորիս անունով Ձեզի մաղթելու քաջառողջութիւն, մշտամնայ պայծառութիւն ու երկարամեայ բազմաբեղուն գահակալութիւն»:

Այնուհետեւ գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, երբ միջնակարգ ու երկրորդական բաժիններու ասմունքի մրցանակակիրներ Անժելինա Սարգիսեան եւ Նարեկ Լաքլաքեան յաջորդաբար արտասանեցին Հենրիկ Թումանեանի «Հերոսուհի մայր» եւ Պարոյր Սեւակի «Մարդ էլ կայ, մարդ էլ» բանաստեղծութիւնները:

Ապա, Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարուեցաւ մրցանակաբաշխութիւնը (մրցանակակիրներուն անուանացանկը տեսնել քիչ անդին): Հասած էր եզրափակիչ սրտայոյզ պահը՝ լսելու Վեհափառին հայրական խօսքը:

«Վերջին տարիներուն յաճախ խօսեցանք հայ լեզուի անփառունակ ներկային եւ տարուէ տարի աւելի շեշտուող որակական նահանջին մասին: Տագնապեցաւ նաեւ արեւմտահայերէնի պաշտպանութեան

ու գարգացման ջահակիր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որ խօսքէն գործի անցնելով՝ կազմակերպեց յատուկ խորհրդաժողովներ, յառաջացուց Արեւմտահայերէնի Պաշտպանութեան Յանձնաժողովը եւ սկսաւ առնել գործնական քայլեր: Այս բոլորը անշուշտ գնահատելի եւ անյետաձգելի քայլեր են: Պէտք է կատարուին եւ կը կատարուին: Բայց մեր խոր համոզումն ու սպասումն է, որ հայ ընտանիքը ըլլայ առաջին նախաձեռնողը այս համազգային պայքարին, որովհետեւ արեւմտահայերէնին եւ մեր ազգային արժէքներուն, աւանդներուն ու սրբութիւններուն առաջին պաշտպանն ու ուսուցիչը հայ ընտանիքն է» հաստատումը կատարելէ ետք, Արամ Ա. Վեհափառ յայտնեց իր խոր ուրախութիւնն ու գոհունակութիւնը եւ առ այդ շեշտեց. «Դուք էք հպարտութիւն ու վստահութիւն ներշնչող այն պատասխանը, որ երիտասարդ սերունդը տէրն է իր ազգային գիտակցութեան եւ յատկապէս արեւմտահայերէնի պաշտպանութեան գոյապայքարին»:

Ապա, հաւաքական գոյապայքարի դաշտերն ու զէնքերը մասնաւորելով՝ Վեհափառը հանգամանօրէն կանգ առաւ հայ գիրքի եւ ընթերցանութեան անփոխարինելի կարեւորութեան վրայ եւ առ այդ շեշտեց. «Կ'ապրինք դժուարին օրեր, բազմատեսակ արդիական մարտահրաւերներ կը սպառնան ո՛չ միայն մեր մեծասքանչին, այլեւ՝ մեր ազգային ինքնութեան: Հետեւաբար, գիրքը է՛ եւ կը մնայ մեր մեծագոյն զէնքը, մեր ինքնութեան դարբնոցն ու հնոցը: Ահա թէ ինչու որքա՛ն կարեւոր է հայ գիրքը, որովհետեւ առանց հայ գիրքի ամէնօրեայ ընթերցանութեան՝ աղքատ պիտի մնայ մեր կեանքը, առանց հայ գիրքի էջերէն յորդող կենարար աւիշին՝ խոցելի պիտի դառնայ ձեր ազգային ինքնութեան կազմաւորումը եւ մութ ու անորոշ՝ մեր ներկան ու ապագան»:

Եզրափակելով՝ Արամ Ա. Կաթողիկոս անգամ մը եւս բարձր գնահատեց լիբանանահայ վարժարաններու կրթական պատասխանատուներուն, տնօրէններուն եւ ուսուցիչ-ուսուցչուհիներուն անխոնջ նուիրումն ու ճիգերը եւ մրցանակակիր աշակերտները նկատեց իրեն ընծայուած լաւագոյն նուէրը՝ իր գահակալութեան 18-ամեակին առիթով:

Ստորեւ կու տանք մրցանակակիր աշակերտ-աշակերտուհիներուն անուանացանկը:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
«ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ»
2012-2013 (Դ. ՏԱՐԻ)

«ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ՄՐՑԱՆՔ
ՄԻՋՆԱԿԱՐԳ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Սարին Մանուկեան Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Նարինէ Մարգարեան Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Սրբուհի Ազնէս
Վարժարան

ԱՌԱՋԻՆ

Մեանա Պոյաճեան Համազգայինի Մ. եւ Հ. Արալանեան Ճեմարան

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Նարեկ Շարոյեան Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Վարդ Զէյթեան Ազգ. Յառաջ - Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

ԱՌԱՋԻՆ

Միրնա Գասամանեան Ազգ. Յառաջ - Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

333

«ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ՄՐՑԱՆՔ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ

Դանիէլ Աւետիքեան Հայ Աւետարանական Շամլեան - Թաթիկեան
Երկրորդական Վարժարան

Շուշան Քէշիշեան Հայ Աւետարանական Գոլէճ

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Նաթալի Մարկոսեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Լուսին Գաբրիանեան

Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

ԱՌԱՋԻՆ

Հրայր Սրկ. Տաղլեան
Դպրեվանք

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

333

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ»-ՈՒ ՄՐՑԱՆՔ
ՄԻՋՆԱԿԱՐԳ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Ռիթա Քերթէնեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Ռիթա Մելքեան Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն
Վարժարան

ԱՌԱՋԻՆ

Նարոս Սերուժեան Համազգայինի Մ. եւ Հ. Արալանեան Ճեմարան

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Ժանկթ Օհանեան Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Արենի Խաչատուրեան Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան

ԱՌԱՋԻՆ

Մելիսա Գուճանեան Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

333

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ ԵՒ
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ»-ՈՒ ՄՐՑԱՆՔ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Սէրուժ Հանտեան Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան

ԵՐԿՐՈՐԴ

Թամար Բախտիկեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԱՌԱՋԻՆ

Գարին Գեորգեան Ազգ. Յառաջ - Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Պետրոս Կ.Ս. Մանձիկեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Դպրեվանք

ԵՐԿՐՈՐԴ

Բալիկ Պալապանեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԱՌԱՋԻՆ

Մեղրի Երէցեան Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

333

«ԱՍՄՈՒՆՔ»-Ի ՄՐՑԱՆՔ
ՄԻՋՆԱԿԱՐԳ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ

Ռազմիկ Տէրունեան Համազգայինի Մ. եւ Հ. Արալանեան Ճեմարան

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Հերա Տէտէեան Համազգայինի Մ. եւ Հ. Արալանեան Ճեմարան

ԵՐԿՐՈՐԴ

Շահէն Արապօղլեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԱՌԱՋԻՆ

Անժելինա Սարգիսեան Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

333

«ԱՍՄՈՒՆՔ»-Ի ՄՐՑԱՆՔ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ

Մեղրի Պետրոսեան Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐՐՈՐԴ

Արին Պուրսալեան Ազգ. Յառաջ - Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

ԵՐԿՐՈՐԴ

Սարին Էքմէքճեան Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն
Վարժարան

ԱՌԱՋԻՆ

Նարեկ Լաքլաքեան Հ.Բ.Ը.Մ.-ի Դարուհի-Յովակիմեան Երկրորդական
Վարժարան

**«Խ. Պապիկեան» աշակերտական մրցանքներու
եւ «Արեւմտահայերէնի Խտացեալ Դասընթացք»ին
առիթով՝**

**«ԴՈ՛ՒՔ ԷՔ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ
ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱԿՆԵՐՆ ՈՒ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ»**

ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս

6 Յուլիս 2014-ի Կիրակին յատուկ գրաւչութիւն եւ նոյնքան խոր
նշանակութիւն ստացած էր Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան համար: Վեհարանի ընդարձակ դահլիճը
ամբողջութեամբ գրաւուած էր միաբաններու, Խաչիկ Պապիկեանի
դուստրերուն, ազգայիններու, լիբանանահայ վարժարաններու
տնօրէններու, հայերէնաւանդ նիւթերու ուսուցիչ-ուսուցչուհիներու,
ծնողներու, աշակերտ-աշակերտուհիներու եւ հայ դպրոցին ու
արեւմտահայերէնին ներկայով ու ապագայով շահագրգիռ
հայրողիներու կողմէ: Առիթը՝ արդէն ասանդութեան կարգ անցած
Կաթողիկոսարանի կազմակերպած «Խաչիկ Պապիկեան» միջ-

դպրոցական մրցանքներու բախտաւոր աշակերտներուն մրցանակաբաշխութիւնն ու «Արեւմտահայերէնի եւ Հայ Մշակոյթի Երկամեայ Խտացեալ Դասընթացք»ին հետեւած ուսանող-ուսանողուհիներու վկայագիրներու բաշխման միացեալ հանդիսութիւնն էր:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին նախագահութիւնը վայելող սոյն հանդիսութեան բացումը կատարելով՝ Կաթողիկոսարանի Կրթական եւ Հայագիտական Բաժանմունքի վարիչ տնօրէն Սարգիս Կիրակոսեան նախ եւ առաջ ուրախութեամբ անդրադարձաւ, որ սոյն միացեալ ձեռնարկը յատուկ նշանակութիւն եւ խորհուրդ ունի այս տարի, որովհետեւ իրարու կողքին կանգնած՝ մայրեր եւ որդիներ միասնաբար կը պայքարին արեւմտահայերէնի եւ հայ մշակոյթի ներկային ու ապագային սպառնացող մարտահրաւերներուն դէմ:

Ապա, թիւերու լեզուով խօսելով՝ ըսաւ, որ այս տարի ալ «Խաչիկ Պապիկեան» մրցանքներուն իրենց մասնակցութիւնը բերին գրեթէ մեր բոլոր կրթական օճախները՝ 4 միջնակարգ եւ 11 միջնակարգ ու երկրորդական բաժիններ ունեցող վարժարաններ, այսինքն՝ 15 դպրոց՝ 99 աշակերտ-աշակերտուհիներով, որոնցմէ մրցանակներու եւ յիշատակութեան նուէրներու տիրացան 41 մասնակիցներ: Նշելէ ետք, որ յար եւ նման նախորդ տարիներուն՝ այս տարի ալ մրցակցութիւնը եղաւ սուր եւ արդիւնքները՝ երբեմն կոտորակներով հեռու իրարմէ, ընդգծեց, որ բաղդատած նախորդ տարիներուն՝ արդիւնքները մագլցողական զարգացում արձանագրած են եւ անակնկալի մատնած կազմակերպիչներն ու դատակազմերու անդամները: Այս իսկ պատճառով, ընդառաջելով Հայոց Պատմութեան, Հայ Մշակոյթի եւ Կրօնագիտական Նիւթերու դատակազմի առաջարկին՝ Արամ Ա. Կաթողիկոս երկրորդական բաժնի Հայոց Պատմութեան, Հայ Մշակոյթի եւ Կրօնագիտական Նիւթերու մրցանակակիր աշակերտներուն թիւը այս տարի բացառաբար վեցի բարձրացուց՝ փոխան երեքի: Աւելի՛ն. նիւթական պարգէններու առաջնութիւնը իլաճ աշակերտուհին դատակազմի չորս անդամներուն կողմէ գնահատուած է 100/100-ի

վրայ ամբողջական նիշով, բացառիկ երեւոյթ մը, որ արժանացաւ ներկաներուն ջերմ ծափողջոյններուն:

Եզրակացնելով՝ Ս. Կիրակոսեան նշեց, որ «Խաչիկ Պապիկեանի յիշատակը յաւերժացնող մրցանքները կը գտնուին ո՛չ միայն իրենց ճիշդ ուղիին վրայ, այլեւ տարուէ-տարի աւելի մեծ գոհունակութիւն կառթեն բոլորիս անխտիր»: Ապա, քանի մը տողերով ներկայացուց ակադեմական նախաձեռնութեան նկարագիր ստացած «Արեւմտահայերէնի եւ Հայ Մշակոյթի Երկամեայ Խտացեալ Ծրագիր»ը՝ իբրեւ իր տեսակին մէջ եզակի իրագործում (Ս. Կիրակոսեանի խօսքը պիտի տանք հետագային):

Այնուհետեւ, Արամ Ա. Կաթողիկոս պարգեւատրեց «Խաչիկ Պապիկեան» մրցանքներուն արժանացած 41 բախտաւոր աշակերտները, որմէ ետք, «Արեւմտահայերէնի եւ Հայ Մշակոյթի Երկամեայ Խտացեալ Դասընթացք»ի մասնակիցներուն անունով իր սրտի խօսքը փոխանցեց Սիլվա Պեքարեան-Գարաօղլանեան: Արեւմտահայերէնի եւ հայ մշակոյթի գոյութեան ու զարգացման սպառնացող մարտահրաւերներուն դէմ պայքարելու իրենց վճռականութիւնը շեշտելէ ետք, ան խորին շնորհակալութիւն յայտնեց այս օգտաշատ ծրագիրին գաղափարը յղացած «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ապագայատեսիլ Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որ ո՛չ միայն մօտէն հետեւեցաւ ծրագիրը յաջողութեամբ պսակելու ուսուցչակազմին ճիգերուն, այլեւ իր հայրական ցուցմունքներով եւ օրհնութեամբ եղաւ առաջին եւ վերջին նպատակասլաց նաւապետը անոր»: Նոյնպէս, յատուկ շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներուն եւ «ծրագրի յաջողութեան ի խնդիր իրենց մասնագիտական գիտելիքները անմնացորդ նուիրումով մեզի պարգեւած մեր ուսուցիչ-ուսուցչուհիներուն»:

Սրտայոյզ եւ ոգեշնչող էր պահը, որ իր գագաթնակէտին հասաւ Արամ Ա. Կաթողիկոսի եզրափակիչ խօսքով: 14 շրջանաւարտ-շրջանաւարտուհիները վկայագիրներով պարգեւատրելէ ետք, Վեհափառը ըսաւ.

«Գօտեպնդիչ եւ հպարտութիւն ներշնչող երեւոյթ մըն է այս գեղեցիկ պահը, որ իր մէջ պատգամ մը ունի փոխանցելիք: Անոնք, որոնք կը հաւատան, թէ մեր լեզուն՝ արեւմտահայերէնը նահանջի մէջ է, այս

երևոյթին դիմաց պիտի գան ըսելու, որ մեր ժողովուրդի գաւակները, յատկապէս երիտասարդները, այս նահանջին դիմաց պիտի չընկրկին, այլ մեր լեզուն պիտի պաշտպանեն, պիտի մաքրեն օտար ազդեցութիւններէ եւ արեւմտահայերէնը, անոր անսպառ գանձերը, գեղեցկութիւններն ու ճշգրիտ գործածութիւնը պիտի տարածեն հայ ընտանիքներէն, մեր դպրոցներէն ու մեր կեանքէն ներս. ահա պատգամը այս գեղեցիկ երևոյթին»:

Ապա, Վեհափառ Հայրապետը յատուկ կերպով ծանրացաւ հայ դպրոցին եւ հայ ուսուցիչ-ուսուցչուհիներուն անփոխարինելի արժէքին ու դերակատարութեան վրայ՝ զանոնք մկրտելով Մեսրոպաւանդ հոգեմտաւոր գանձերու անխաթար պահպանման ու զարգացման համար ոգի ու բռին պայքարող հայ լեզուի եւ մշակոյթի արթուն պահակներ եւ բառին ազնուագոյն առումով գաղափարապաշտ անկեղծ զինուորներ:

«Դուք էք տէրն ու պահակը հայ լեզուին եւ մեր նորահաս սերունդներու հոգեմտաւոր դաստիարակութեան, ներկային ու ապագային համեստագոյն, բայց արժանաւոր դարբինները: Անգնահատելի են հայ ուսուցիչին նուիրական առաքելութեան ի խնդիր ցուցաբերած ձեր ծով համբերութիւնը, ծառայական ոգին եւ հայ կրթական մշակի բծախնդիր լրջութիւնը: Մենք հպարտ ենք ձեզմով, ձեր աշխատանքով եւ ձեր համազգային ուխտով» յայտարարելէ ետք, Արամ Ա. Կաթողիկոս բարձր գնահատեց «Արեւմտահայերէնի եւ Հայ Մշակոյթի Երկամեայ Խտացեալ Ծրագիր»ին մասնակցած 14 հաւատաւորներուն լրջութիւնն ու նուիրումը եւ անոնց մաղթեց բեղուն եւ երկնային բարիքներով հարուստ ապագայ:

Գոհ եւ ուրախ էին բոլորը: Ե՛ւ մայրերը, ե՛ւ որդիները, ե՛ւ ներկայ հասարակութիւնը: Միացեալ ձեռնարկը փակուեցաւ «Կիլիկիա» մաղթերգի յուզախոռով երգեցողութեամբ:

Ստորեւ կու տանք «Խաչիկ Պապիկեան» մրցանակակիր աշակերտ-աշակերտուհիներուն անուանացանկը:

Ա.
«ՀԱՅ ԼԵԶՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԻՋՆԱԿԱՐԳ
ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նարինե Մարգարեան Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Սրբուհի Ազնէս
Վարժարան

ՉՈՐՐՈՐԴ

Շանթալ Ատաճեան Ազգ. Յառաջ - Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

ԵՐՐՈՐԴ

Մանէ Պասմաճեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան

ԵՐԿՐՈՐԴ

Պետրոս Տէր Կարապետեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Դպրեվանք

ԱՌԱՋԻՆ

Սարել Չափարեան Ազգ. Յառաջ - Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ

ԵՐՐՈՐԴ

Վահագն Չըլտրեան Հ.Բ.Ը.Մ.-ի Դարուհի - Յովակիմեան Երկրորդական
Վարժարան

ԵՐԿՐՈՐԴ

Ռիթա Սարգիսեան Ազգ. Սուրէն Խանամիրեան Վարժարան

ԱՌԱՋԻՆ

Նարոս Սերուժեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

ԵՐՐՈՐԴ

Շաղիկ Թերզեան Ազգ. Յառաջ - Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

ԵՐԿՐՈՐԴ

Յարութ Կիլիզեան Հ.Բ.Ը.Մ.-ի Դարուհի - Յովակիմեան Երկրորդական Վարժարան

ԱՌԱՋԻՆ

Բալիկ Պալապանեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

ԵՐՐՈՐԴ

Պետրոս Սրկ. Մանճիկեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք

ԵՐԿՐՈՐԴ

Կարօ Սրկ. Նաճարեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք

ԱՌԱՋԻՆ

Սիմա Ճապրայեան Ազգ. Յառաջ - Գալուստ Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան

^

Բ. «ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ»

ՄԻՋՆԱԿԱՐԳ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

ԵՐՐՈՐԴ

Գեորգ Եագուպեան Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Եսայի Մանուկեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք

ԱՌԱՋԻՆ

Գրիգոր Արապաթեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Դպրեվանք

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

ԵՐՐՈՐԴ

Մհեր Փելթեքեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան

ԵՐԿՐՈՐԴ

Հայկ-Աւօ Աւետիս Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան

ԱՌԱՋԻՆ

Ռիթա Մելեքեան Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն
Վարժարան

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

ՉՈՐՐՈՐԴ

Սարգիս Կս.Սրկ. Աճէմեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Դպրեվանք

ԵՐՐՈՐԴ

Մանուշակ Քեչեճեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Վանայ Ճենանեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան

ԱՌԱՋԻՆ

Դալար Տէմիրճեան Ազգ. Յառաջ - Գալուստ Կիւլպէնկեան Երկրորդական
Վարժարան

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

ՎԵՑԵՐՈՐԴ

Մհեր Գափլանեան Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճ

ՀԻՆԳԵՐՈՐԴ

Արաքս Խօշեան Ազգ. Յառաջ - Գալուստ Կիլյալենկեան Երկրորդական
Վարժարան

ՉՈՐՐՈՐԴ

Գարին Սիմոնեան Հ.Բ.Ը.Մ.-ի Դարուհի - Յովակիմեան Երկրորդական
Վարժարան

ԵՐՐՈՐԴ

Յարութիւն Սրկ. Բանձարճեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Դպրեվանք

ԵՐԿՐՈՐԴ

Սարին Մանուկեան Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճ

ԱՌԱՋԻՆ

Ռիթա Ֆերմանեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան

^

Գ. «ՄԵՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ»

ՄԻՋՆԱԿԱՐԳ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

ԵՐՐՈՐԴ

Արամ Ադամեան Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն
Վարժարան

ԵՐԿՐՈՐԴ

Վիքի Փանոսեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԱՌԱՋԻՆ

Յակոբ Թաշճեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

ԵՐՐՈՐԴ

Դրո Միրզայեան Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Սէրուժ Յովսէփեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան
Ճեմարան

ԱՌԱՋԻՆ

Անժելինա Սարգիսեան Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

ԵՐԿՐՈՐԴ

Արինա Թեփիրճեան Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան Բարձրագոյն
Վարժարան

ԱՌԱՋԻՆ

Լէթիսիա Գարտաշեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան
Ճեմարան

ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ

ԵՐՐՈՐԴ

Շահէն Արապողլեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

ԵՐԿՐՈՐԴ

Գուրգէն Փափագեան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան
Ճեմարան

ԱՌԱՋԻՆ

Սիմոն Տէրտէրեան Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ

^

«Արեւմտահայերէնի եւ Հայ Մշակոյթի Երկամեայ Խտացեալ Դասընթացք»ի
շրջանաւարտներուն անունները:

Արփի Արբահամեան

Սեդա Աւագեան-Մաճունեան

Նայիրի Էդոյեան

Մակի Կրպոյեան

Իրմա Ճերէճեան

Փաթիլ Մկրտիչեան
Սիւզի Նաշալեան
Զանի Շահինեան-Մեսրոպեան
Մարօ Պագալեան
Մարալ Պաղչէճեան-Ղարիպեան
Սիլվա Պեքարեան-Գարաօղլանեան
Հերա Սարգիսեան
Սեդա Քելէքեան
Պօղոս Յ. Քիւրտեան